

375

2-11

ԾՐԱԳԻՐ

ԳՐԱԴԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

— — — — —

ԹԵՍՂՐԱԾ 1930 ՅԵՐԵՎԱՆ

375
N-11
Մ

ԾՐԱԳԻՐ

ԳՐԱԴԱԿԱՆ ԴՐՈՅՆԵՐԻ

1. ԳՐԵԴԻՑՈՒԹՅՈՒՆ ԳՎԲՈՑՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հասակավորների ընդհանուր կրթության մեջ գրագիտության դպրոցն առաջին աստիճանն եւ Նրա անմիջական շարունակությունն և ուսուցման հետագա աստիճանը կազմում ե հանրակրթարանը:

Գրագիտության դպրոցների նպատակն ե հասակավոր անգրագետին գրագետ դարձնել, վորապեսզի գրա միջոցով և գրա հետ միասին նրանք դասակարգալին գիտակցություն ձեռք բերեն, սոցիալիստական շինարարության խնդիրները հասկանան և գիտակցորեն ու ակտիվ մասնակցեն այդ շինարարությանը:

Այս նպատակին համնելու համար պիտի լուծել հետակալ խնդիրները.

1. Սովորեցնել անգրագետին կարդալ, դրել և հաշվել:

2. Սովորեցնել նրանց այդ ունակությունները՝ արդարացնելու համար և ինքնուրույն կերպով շարունակել դրամությում սկսած աշխատանքը:

ՀԱԽՀ - ՀՀՊՀ

Ա. Ա. Մասնիկյան
Ա. Սահմանական Խուման

15634 - 52

Հրատ. № 1401

Դրամ. № 5781 (ր). պատվ. № 1066, տիրամ 3000

Պետհրատի յիշկուրդ տպարան Յերևանում

3. Ծանոթացնել նրանց մեր յերկրի քաղաքական և տնտեսական կյանքի հիմունքներին.

4. Սովորեցնել նրանց ակտիվ մասնակցելու շրջապատի առորյա կրանքին, արտադրական և հասարակական աշխատաքննիրին:

Այս խնդիրների հաջող լուծման համար անհրաժեշտ ե ունակությունները տալիս հենվի հասարակագիտական, արտադրական ու արհեստակցական—կենցաղային բովանդակությունն ունեցող գեղարվեստական նյութերի և ընթացիկ կյանքի յերևույթների վրա:

Բովանդակությունն պես ե նամապատախանի հասակավոր բանվորների և զյուղացիների պահանջներին և բղիկ շրջապատի արտադրական քաղաքական խնդիրներից:

Սույն ծրագիրն ի նկատի ունի հասակավոր սովորողին:

Խմբում հասակավորներին և գեռահասներին միացնելուց պետք ե խուսափելու վորովհետև վերջիններս պահանջում են այլ մոտեցում:

Գրագիտության դպրոցում դասավանդությունը պետք ե տարվի՝ ինկատի ունենալով հասակավոր մարդու հոգեբանությունը: Պետք ե վերցնել հասակավոր մարդու հետաքրքրությանը մոտ նյութ, որինակները վերցնել առորյա և ընթացիկ կյանքից՝ կիրառելով մասնավորից դեպի ընդհա-

նուր, ծանոթից դեպի անծանոթ և մոտիկից դեպի հեռուն գնալու սկզբունքը:

2. Ո՞ԻՄ ՀԱՄԱՐԵԼ ԱՆԴԻՇԳԵՑ

Անգրագետ պետք ե համարել նրանց՝

1. Ովքեր բոլորովին կարդալ և գրել չգիտեն,
2. Ովքեր տառեր ճանաչում են, բայց կարդալ չեն կարող:

Մանրություն, -- Ովքեր գիտեն կարդալ բայց գրել չգիտեն՝ ցանկալի յե սովորեցնել անջատական—խմբակային ձևով և կիրակնորյա դպրոցներում:

3. ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈԽՄՄԱՆ ՊԼԱՆ

Գրագիտության դպրոցների ծրագիրն անցնելու համար նախատեսվում ե գյուղում յերկու դասից բարկացած 125 պարագմունքի որ, իսկ քաղաքում 2 դասից բաղկացած 200 պարագմունքի որ: Զուտ այլքենարանի շրջանին հատկացվում ե 45 որ, իսկ մնացած ամբողջ ժամանակը՝ ընթերցարանին, դրանով, լրագրուվ, քարտեզով աշխատանքին:

Իսկ ինչ կարգ պիտի լինի պարագմունքների մեջ դասի ընթացքում: Վերջին տարիների փորձը ցույց ե տալիս, վոր սովորաբար դասի սկզբում լինում ե զրուց (մանավանդ ուսուցման այբբե-

նարանի շրջանում), ապա հետևում ե ընթերցումը, գրությունը և դասի վերջում մտցվում ե հաշիվ։ Նյութերի դասավորության այս կարգը առաջ ե գալիս նախ և առաջ ուսուցման կոմպլեքս սալին սիստեմից, վորն ընդունված ե գրադիտության դպրոցում, վորտեղ աշխատանքի բոլոր մոմենտները պետք ե համաձայնեցված լինեն միմյանց հետ։ Ուսուցման այս սիստեմը պայմանավորում ե այն, վոր բոլոր ունակությունները պետք ե մշակվեն թեմայի վորոշնությունիցի վրա։

Թեման պարզաբ.	Վրուց. 10 ր.
Ընթերցման	45 »
Գրության	40 »
Հաշվին	15 »
<hr/>	
Ընդամենը,	110 ր. (1 ժ. 50 ր.)

4. ԴՐԱԳԻՄԻ ԲՈՎԸՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այբբենարանի շրջանի ուսուցման նյութերն ամբողջապես պիտի վերցնել այբբենարանի հոգվածներից, կապելով սոցիալիստական շինարարության, քաղաքական մոմենտի, 5-ամյա պլանի, կենցաղային լեկ պրոֆեսիոնալ հարցերի հետ։ Բղինեցնելով կուս։ 16-րդ համագումարի վորոշումներից։ Ուսուցման այս առաջին շրջանում

զրուցները պիտի կրեն սպասարկող բնույթի (նրանց խնդիրն ե՝ կարճ և ախապատրաստել տեքստը։)

« Դեպի կոմունացի (զյուղական վարիանտ) ընթերցարանի բովանդակությունը կազմում են խորհրդակին շինարարության ամենակարևոր հարցերը և բաժանված ե հետեւյալ չորս հատվածների, վորոնց հիման վրա լեկ պետք ե տանել զրուցներ։

1. Անհրաժեշտ ե բարձրացնել զյուղատնտեսության արտադրողականությունը (այս թեմայում լուսաբանել զյուղատնտեսության կոլեկտիվացման յեկ կոոպերացիայի վերաբերյալ հարցերը։)

2. Անհրաժեշտ ե բարձրացնել ֆաբրիկների յեկ գործարանների արտադրողականությունը, ամրացնել զյուղի և քաղաքի կապը (այս թեմայում լուսաբանել խնդրուստրացման և զյուղատնտեսության մեքենայացման նշանակությունը, արհմիությունների գերը, հարվածայնություն և սոցմրցում։

3. Անհրաժեշտ ե ամրացնել խորհրդակին իշխանությունը, վորն աշխատավոր գյուղացիական մասսաների ղեկավար՝ բանվոր դասակարգի իշխանությունն ե (այս թեմայում լուսաբանել հոկտեմբերյան հեղափոխության նշանակությունը)։

4. Անհրաժեշտ ե ամրացնել Խորհրդային Միությունը, վորն ամբողջ աշխարհի աշխատավորության հենարանն ե (այս թեմայում լուսաբանել Խ.Ս.Հ.Մ. ինքնապաշտպանության ամրացումը և ոգոսառուի 1-ը, պրոլետարիատի միջազգային որը—մայիսի 1-ը, աշխատավորուհիների միջազգային որը—մարտի 8-ը, յերիտասարդության միջազգային որը՝—սեպտեմբերի առաջին կիրակին և Փարիզի կոմունան՝ մարտի 18-ը:)
«Բանվոր» դասագրքի (քաղաքի վարիանտ) ընթերցարանի հիմնական բաժիններն են.

1. Նոր կյանք կառուցենի:— Այս բաժնում պետք ե տալ նոր կենցաղի յերկուլիթները, դրանց կապակցությունը և հիմնավորումը՝ հիմք ունենալով դասագրքի հողվածները և ըրացնելով անմիջական շրջապատի տվյալներով:

Այս բաժնի ընդհանուր ամփոփումը տալիս անհրաժեշտորեն հանգում են նոր կենցաղի հիմքին՝ սոցիալական արտադրական կյանքին, վոր կազմում ե 2-րդ բաժնի բովանդակությունը:

2. Բարձրացնենի մեր արդյունաբերությունը:— Այս բաժնում պիտի պարզաբանել կազմակերպված կոլեկտիվ աշխատանքի, ինդուստրացման, սոցմրցման, հարվածայնության նշանակությունը, տալ մեր արտադրության ընդհանուր պատկերը հատուկ գծերով:

3. Բարձրացնենի մեր գյուղատնեսությունը:— Գյուղի և քաղաքի կազմը. գյուղատնտեսության կողեկտիվացում և մեքենայացում, կոռպերացիա, հին և նոր գյուղի հակադրությունը:

4. Ամրացնենի և ծավալինի Հոկտեմբերի նըվանումները:— Այս բաժնում պետք ե տալ հիմնական գծերով. վետրվարյան հեղափոխությունը, Հոկտեմբերյան հեղ սփ լսությունը, սոցիալիստական շինուարության շրջանը, գաղափար խոր. իշխանության բնույթի և կառուցվածքի մասին, հասարակական կողմակերպությունների մասին (Կոմկուս, Լկյում, Արմմիություն, Կոմինտերն, Ռոպր), կարմիր բանակ, հեղափոխական տոներ: Վերջացնել՝ զգալ և զիտակցել տալով համաշխարհային Հոկտեմբերի անխուսափելիությունը:

Պետք ե պաշտպանունքներն այնպես դնել, վրը նըանք կապվեն և լրացվեն արտադպրոցական աշխատանքներով. Վորոնք կարող են ոժանդակել սովորողների հասարակական քաղաքական դաստիրակության: Դրա համար պիտի ոգտագործել սովորողների՝ ակումբ, խրճիթ. ընթերցարան, կարմիր անկյուն և զանազան հավաքութներ հաճախելու բոլոր գեղաքերը: Ուսուցման ամբողջ շրջանի ընթացքում շարաթական առնվազն մի ժամ պետք ե հատկացնել հասարակական-քաղաքական զրույցներին՝ սիստեմատիկ կերպով ոգտագործելով թերթերի նյութը:

Զրույցների թեմաները կարող են լինել հետեւյալները.

Կոսովնիստական կուսակցությունը և Լենինը:
Հոկտեմբերյան Հեղափոխություն.

Հոկտեմբերյան հեղափոխության արձագանդները մեր յերկում:

Հայաստանի խորհրդայնացումը և Անդը. Սոց. Ֆեդ. Խորհ. Հանրապետություն:

Պայքար նացիոնալիզմի և նացիոնալիստական տրամադրությունների դեմ:

Ինչպես ե կառուցվում խորհրդային իշխանությունը.

Խոշոր կոլեկտիվ տնտեսությունները.
Բերքատվության բարձրացումը.

Բանվորի և աշխատավոր գյուղացու դաշինքը.

Բառուակի, չքավոշի և միջակի պուքարը
պրոլետարիատի ղեկավարությամբ կուլակի դեմ:

Պայքար աջ սպառությունիզմի և «Ճախ» խոտորումների դեմ:

Կարմիր Բանակը.
Հակակոնական խնդիրներ:

Կոոջ ազատագրությունը:
Խորհրդային Միությունը բոլոր աշխատավորների հայրենիքն ե:

Նոր ֆաբրիկների և գործարանների կառուցումը.

Պրոլետարիատի և աշխատավորության սոցիալիստական ինքնագործությունն:

Նոր կենցաղը.

Դժամյա բանվորական որը.

Նյութի վերոհիշյալ գասավորությունից յերեվում ե, վոր այստեղ մշակման համար վերցնում են վոչ թե իրարից մեկուսացված առարկաներ, այլ վորոշ թեմաներ, վորոնց վերլուծությամբ զբաղվելով՝ վերլուծում են և կյանքը և մասնակցում են նրան: Վորևէ հարցի ուսումնասիրությունը պիտի բերի մի վորևէ անմիջական գործողություն: Ուսումնասիրեցիր զլուզատնտեսությունը — աշխատիր յեղակացություններ մտցնել կյանք, ուսումնասիրեցիր արդյունաբերությունը, հայտնաբերեցիր թերություններ — պետք ե անմիջական գործողության միջոցով նրանց վերացնել: Յեթե մենք սրա վրա ուշադրություն չը դարձնենք՝ ծրագրի ելությունը չենք հասկանա: Սա ծրագրի առաջին բնորոշ հատկանիշն ե:

Բայց վորպեսզի այս կամ այն յեզրակացությունը կարելի լինի կյանք մտցնել, անհրաժեշտ ե նախ և առաջ գիտենալ անմիջական շրջապատի միջավայրն ու կյանքը: Հաճախ պատահում ե, վոր մենք չգիտենք՝ վորաեղից և ուր ե հասնում մեր բնակության տեղի գետը, ինչ Փաք-

ըիկներ ու զործարաններ, ինչ հեղափոխական հուշարձաններ կան: Չե՞ վոր շատ հետաքրքիր ե լինել մոտակա Փաբրիկայում և ծանոթանալ նրան: Այստեղից բղիում ե իր ըրջապատը արևտեսական և հասարակական տեսակետից գիտենալու անհրաժեշտությունը: Այս պարզ պատկերացնելով միայն կորելի յե նպատակահարմար կառուցել դպրոցական աշխատանքը: Այս ծրագրով աշխատանքը պետք ե սերտ կապված, ավելի ճիշտ կառուցված լինի գալառազիտության վրա: Սա ծրագրի յերկրորդ բնորոշ հատկանիշն ե:

Ծրագրի յերրորդ բնորոշ հատկանիշն այն է, վոր նա իր մասերում մի ինչվոր քարայած և անփոփոխ բան չե, այլ նյութի մշակման կարգը կախված ե սովորողների կազմից: Ծրագիրը հաշվի յե առնում, վոր զրագիտության դպրոցում կարող են լինել և գյուղացիներ, կարող են լինել և բանվորներ (Փաբրիկաններից, զործարաններից, հանքերից): Յեկ ահա այս բանից կախված՝ ծրագրի բովանդակության մշակումը կարող ե և պետք ե փոխվի իր մասերում: Յեթե զրագիտական դպրոցում սովորողների մեծ սնասնությունը կազմված ե գյուղացիներից, կարգը մնում ե նույնը, ինչպես ցույց ե տրված վերևում:

Քրագիտության պարոցի յորրորդ բնորոշ հատկանիշն այն է, վոր նա ընդգծում ե աշխատան-

քի ընթացքում ընթացիկ կրամքի յերեսութներն ոգտագործելու անհրաժեշտությունը: Հասարակական —քաղաքական կյանքի վերաբերող վոչ մի մոմենտ չպիտի վրիպի մեր ուշադրությունից: Խորհուրդների, կոպերատիվների, փոկերի ընտրությունները, տոների անցկացումը, գյուղամիացարկի հավաքումը, զարնանացանը և աշնանացանը, հացամթերումը փոխառությունների կամպանիան, սոցիալիստական մրցումը, խորհրդադային ապարատի գտումը, կուլտարշավը և նման խնդիրները պիտի զբաղեցնեն մեր դպրոցներն ավարտողներին: Աշխատանքի այսպիսի գրումն ապահովում ե ծրագրի մշակման իսկական արդիականությունը, իսկական, կապը կյանքի հետ:

Մրա հետ կապված անպայման անհրաժեշտ ե գրադիտության դպրոցում լրացրանել ինչպես հեղափոխական տոները, նույնպես և հայտնի տարեգարձները:

Վերջապես հինգերորդ և վերջին հատկանիշն այն է, վոր որագրի ամբողջ նյութը համաձանեցրած ե հասակավոր սովորողի հետաքրքրությանը պետք ե արտադրության և տնտեսության հետ կապված զրույցներ անցկացնել և լայն չափով ոգտագործել «Բատրակ», «Բանվոր», «Հայաստանի Աշխատավորուհի» թերթերը: Բնականը պատճեն մասսայական թերթերի գործածությունը լավագույն մի-

ջոցն և աշխուժացնելու դպրոցի ներքին աշխատանքները և պարզաբանելու ընթացիկ կյանքի խնդիրները:

5. ՈՒՆԻՑԱԽԹՑՈՒՆԵՐԻ ԾԲԸՆՆ ՈՒ ՀԱՅՈՐԴԸՆՈՒԹՅՈՒՆ.

ԸՆԹԱՑՄԱՆ ՎՐԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ.

Բառերի մօակումն —խոսքի ընթերցում, նրա վերլուծությունը բառերի, նրանց գրապատկերը, մտքում տպագորելը, արտասանություն, տեղափոխություն:

Վանիկերի մօակում.՝ Բառերի վերլուծությունը վանկերի, վանկերի գրապատկերի մտքում տպագորվելը, նոր բառերի և խոսքերի կազմում:

Հնչյունների մօակում.՝ Ծանոթութ.՝ Վանկերից և բառերից հնչյունատառերի առանձնացում: Նոր վանկերի ընթերցում, նոր բառերի խոսքերի կազմում, այբբենարանի տեքստի լնթերցում:

Ալբենարանի հետ զուգընթաց ծանոթ հընչյուններից կազմված բառերի և խոսքերի ընթերցում պլակատներում, ցուցանակներում, հայտարարություններում, թերթելի և գրքերի վերնագրերում և այլն:

Պատկանարով տպագրված գրքերի և թերթերի դանդաղ ընթերցում ամբողջական բառերով:

Հոգվածին վերաբերող հարցերի կարճ պատասխաններ.

Կարդացածի հիմն սկան մտքի ամփոփում:

Ծանոթություն դրքի անվան, հեղինակին, հրատարակության, գնին:

Ցանկի ոգնությամբ գտնել հարկավոր հոգվածը:

Ծանոթություն «Մամկալ» (և «Բանվոր») լրագրին (անուն, թիվ, հասցե, խմբագրություն, թղթակցություն, առաջնորդող):

Ծանոթություն լրագրի գլխավոր բաժիններին

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Մշակման էնթարկվող բառերի և ասույթների արտանկարում: Զեռագրից գիտակցական արտագրություն:

Տպագրիր տեքստից գիտակցական արտագրություն:

Զեռագրիր հիշողությամբ գրել.

Հարցերի կարճ պատասխանների կազմում:

Անվանացուցակի կազմում:

Կարճ գիմումի, նամակի, պատի լրագրի կուլեկտիվ և անհատական թղթակցությունների և գրության գործնական ձևերի կազմում:

Ուսուցման շրջանում անհրաժեշտ եւ տալ հետեւալ ուղղագրական ունակությունները՝ անձատառը հատուկ անուններում, ասույթի

սկզբներում և վերջակետից հետո, բ) առղաղարձ, գ) վերջակետի գործածությունը:

Դիտողական թեկալրություն. — Կարգացածի շուրջը մշակված հարցերի պատասխաններն ինքնուրույն կերպով զրի առնել կարճ ասույթիներով:

Նախապես պլան մշակել հարցերի ձևով և
համաձայն պլանի կազմել ու գրի առնել փոքրիկ
պատմվածք:

Ինքնուրուցն կերպով կազմել հեռագիր, հասցե, ստացական, լիազորագիր, հայտարարություն, անկետ լցնել:

Հոգնակի վերջավորությունների (երևանէր) ուղագրություն:

Ծորդ և երորդ վերջավորություններով բառերի գրություն:

Ոժանդակ բայերի առանձին գրելը:
Կրծատ բարդ բառերի գրություն:

L u c b u .

Ծանոթություն սովորական և հոռմեական
թվանշաններին։ Յերկնիշ թվերի ընթերցումն ու
գրությունը։ Նրանց արտահայտությունը համբիչի
վրա։ Գրավոր հաշվի - գումարժան և հանման վե-
րաբերյալ 100-ի սահմանում։ Զերոյի նշանա-
կո թյունը թվերի ձևակերպման մեջ։ Գումա-
րում և հանում համբիչի վրա։ Յերանիշ թվերի

ընթերցումն ու գրանցումը: Միանիշ թվերի բանավոր բազմապատկման ձևերը 100-ի սահմանում: Բազմապատկման աղյուսակի թվաբանության չորս գործողություններ և գրավոր 100-ի սահմանում:

Բազմանիշ թվերի ընթերցումն ու գրությունը: Յեռանիշ թվերի գրակոր գումարումն ու հանումը:

— $\frac{1}{2}$, — $\frac{2}{4}$, — $\frac{1}{8}$ պարզագույն մասերի ընթերցումը ուղանցումը։ Գաղափարը շատ գործածական մետրական չափերի մասին (մետր, կիլոմետր, հեկտար, գրամ, կիլոգրամ, տոնն, լիտր)։ Կլոր հազարներ և միլիոններ և նրանց կրճատ գրանցումը (56 միլիոն, 17 հազար և այլն)։

Հսդանիշ և վեցանիշ թվերի գումարումն ու հանումը: Դիագրամների ընթերցում:

Միլիոնի սահմանում թվերի ընթերցումն ու գրանցումը, կամավոր մեծության թվերի գումարումն ու համումը, թվերի կլորացումը: Տասնորդական կոտորակների (տասնորդական և հարյուրերորդական մասեր) ընթերցումն ու գրանցումը (կապված մետրական չափերի հետ):

Բազմապատկման կիրառումը պըսակտիկայում։
Քառանկյան և յեռանկյան մակերեսի հաշվում։

Միանիշ թուժաբազմապահկում՝ պարզ գեղ-
քերից ավելի քաղաքացիներին անցմելով։ Բազմապատ-



И. А. Мясников
Изучательница

15634-52

կում բազմապատկելու միջի և վերջի դերոյով։
Բազմապատկում 10-ով, 100-ով, բազմա-
պատկում 20—30 և ալլով։ Բազմապատկում 200,
300 և այլով։ Բազմապատկում յերկնիշ թվով։
Յերկնիշ թիվը միանիշի վրա բանավոր բաժա-
նման ձևեր։ Բաժանման կիրառումը պրակտի-
կալում։

Յեռանիշ, քառանիշ թվերի բաժանումը 10-ի
և 100-ի վրա։ Տոկոսների հաշվում։

Յեռանիշ և քառանիշ թվերի գրավոր բաժա-
նումը միանիշի վրա։ Յեռանիշ և քառանիշ թվերի
բաժանումը միանիշի վրա, յերբ բանորդում
գերուով թիվ ե ստացվում։

Թիվի բազմապատկումը, յեռանիշ թվով։

Յեռանիշ թվով բազմապատկում, յերբ բազմա-
պատկիշի մեջ դերը կա։

Զերոներով վերջացող թվերի բազմապատկում։
Զերոյով վերջացող թվերի բաժանումը միա-
նիշի վրա։

Յեռանիշ թվերի բաժանման գործողություն։
Հաշիվ, պարզ նախահաշիվ կազմելը։

Ս. Ըստանք բարեկով.

1. Ինչպես ե պատկերացվում քարտեզի վրա
ջուրը։
2. Ինչպես են պատկել ացվում քարտեզի վրա

քաղաքները, գետերը, լեռկաթղիծն ու սահման-
ները։

3. Իր շրջանի քարտեզի վրա գտնել շրջանի
կենտրոնը, գլխավոր գյուղերը, լեռները։

4. Հայաստանի քարտեզի վրա գտնել Յերե-
վանը, շրջանային կենտրոնները, շրջաններն ի-
րենց սահմաններով, Սեփանա լիճը, Զանդին, Ալ-
լահվերդու և Ղափանի հանքերը, Զորագեսը, Շիր-
կանալը, Սարդարաբաթի ջրանցքը։

5. Անդրկովկասի քարտեզի վրա ցույց տալ
Խորհրդականը, Խորհրդ. Վրաստանն ու Խորհր-
դականն իրենց գլխավոր քաղաքներով։

Տարեկան գրադիտական դպրոցներում պետք
է ավելացնել՝

6. Աշխարհի մասերը.

7. Խ. Ա. Հ. Մ. վարչական քարտեզի վրա
գտնել Անդրկովկասյան և մյուս անկախ հան-
րապետությունների և նրանց մայրաքաղաքները։

8. Քարտեզի վրա գտնել Արեվմտյան Յեւլո-
պայի ամենախոշոր պետությունները, նրանց
մայրաքաղաքները։

9. Կիսագնդերի քարտեզների վրա գտնել Խ.
Ա. Հ. Մ. և կապիտալիստական ամենազլիավոր
յերկրները՝ Անդրկան, Ֆրանսիան, Գերմանիան,
Իտալիան, Յապոնիան, Ամերիկան։

Մերողական ցուցմունքներ ունակությունների
վերաբերյալ.

Կարդալու յեվ գրելու ունակություններից առվում են միայն նրանք, վորոնք հնարավորություն են տալիս գրադիտության դպրոցն ավարտողին կարդալու և հասկանալու հանրամատչելի գիրք ու լրագիր և շարագրելու պարզ գործնական գրություններ, վորոնք կարեոր են գյուղացու և բանվորի առորյա կյանքում։

Ուղղագրությունից տրվում են միայն մինչ քերականական վարժություններ։ Գրագիտության դպրոցը ձգտում է գիրը դարձնել վոչ թե կատարելապես անսխալ, այլ միայն դյուրընթեռնելի։

Հաշվի նկատմամբ զրագիտության դպրոցի հիմնական խնդիրն ե, վոր ավարտողը կարողանա հասկանալ զրքի ու լրագրի թվական տվյալները ինքնուրույն կատարել իր տնտեսութանն ու հասարակական աշխատանքին վերաբերող հաշիվները։

Ունակությունների մեջ մտցված են նաև բարտեզով աշխատելու տարրական վարժություններ։ Քարտեզով աշխատանքն ունակությունների մեջ ե մտցված, վորովհետև քարտեզից ոգտվել սովորելու համար հարկավոր են հաճախակի և ցերկարատեկան վարժություններ։

Քարտեզի ծանոթությունը հարկավոր ե լրագիր և գիրք կարդալու համար։ Գրագիտության դպրոցում քարտեզ գծել չենք սովորեցնում, և կարիք ել չկա. սենյակի, տան, բակի հատակագիծ գծել սովորեցնել և ապա անցնել քարտեզին. այլ ընդհակառակը՝ միանգամից անցնում ենք քարտեզի վրա ծովեր, քաղաքներ ցույց տալուն և բացատրում ենք թե ինչ պայմանական նշաններով և գծերով են նրանք նշանակվում քարտեզի վրա, քարտեզի վոր կողմն ե ցույց տալիս չյուսիս, վոր կողմը չարավ և այն։

Կարդալու, գրելու և հաշվելու հեշտ յուրացման համար այբբենարանի նյութի բովանդակությունը նախապես պարզաբնվում ե՝ ա) նախապատրաստական կամ տեքստը զուգընթաց բացատրող կարձը բույցներով, բ) գեղարվեստական նյութի ընթերցմամբ, գ) ցուցագրական նյութի մուծումով։

Այս կամ այն միջոցի գործադրությունը կախված ե մշակվող տեկստի բնութից, խմբի կադմից և աշխատանքի ընդհանուր պայմաններից։

Այստեղ հարց ե առաջ գալիս՝ ինչպես կապել կոմպլեքսը ունակութունների հետ։ Զե վոր ստացած ունակությունը կարելի յե ամրացնել միայն այն ժամանակ, յերբ բավականաչափ վարժություններ ե լինում զրա վերաբերյալ։ Պետք ե պարզ և վորոշ լինի, վոր ունակության զարգաց-

ման համար լելակետ պիտի ընդունել կոմպլեքսացին նյութն իսկ վարժության հետ կապված ունակության զարգացման համար կարելի յէ կոմպլեքսից դուրս թեմայի հետ չկազմված նյութ ընտրել, սակայն այդ նյութը վերցրած պիտի լինի — սովորողների արենստակցական — կենցաղային կյանքից, պարզ և մատչելի պիտի լինի և ամբողջապես կապված նրանց կենսական փորձի հետ:

Վորպեսղի այսորինակ վարժությունների անհրաժեշտությունը պարզ և վորոշ լինի, բերենք մի գործնական դեպք: Դիցուք նախորդ դասին մենք սովորողներին բացատրել ենք զրոյի նշանակությունը մի վորեվե թվի միջում: Այն դասին այդ թիվը կապված եր վորոշ թեմայի հետ: Իսկ հաջորդ դասին մշակվում ե մի ուրիշ թեմա, իսկ զերոյով թիվ չի տալիս նա: Ի հարկե այդպիսի դեպքում անհրաժեշտ ե ընտրել հատուկ լրացուցիչ նյութ, ովլալ դեպքում թվեր, վորոնց մեջ զրո լինի: Այդպիսով ունակությունների զարգացումը միանգամայն նորմալ կդնա, յեթե ունակությունների ամրացման համար կատարում ենք բավարար վարժություններ:

Այս կամ այն ունակության ամրացման համար կարելի յէ հանձնարարել տնային աշխատանքներ՝ վորպես դասարանական պարապմունքների լրացում: Տնային աշխատանքներ չի կարելի պար-

տաղըել: Ուսուցիչը պիտի բացատրի վերոհիշյալի նշանակությունը կերպ տեսնում ե վոր սովորողները ցանկություն են հայտնում տանն աշխատել, կառող ետալ նրան արս կամ այն առաջարդությունը:

Գրագիտության գլորոցում պարապմունքների համար անհրաժեշտ ե ունենալ այբբենարան, հատվող այբբեն, լրագիր, ընթերցանության համար փոքրիկ գրադարան, որացույց, համրիչ, մետրական չափերի պլակատ, մետրանոց քանոն (սանտիմետրների բաժանած), ցուցիչ, քարտեզներ, պլակատների համար թուղթ: Այս բոլորը պետք ե ձեռք բերել ժամանակին:

Ալբբենարանի ընտրությունը կատարվում ե ըստ գրագիտության գլորոցի կազմի: Քաղաքի համար գործածվում ե «Բանվոր», իսկ գյուղի համար «Դեպի կոմունա» այբբենարանը:

Հատվող այբբենն անհրաժեշտ ե և անփոխարինելի պիտույք գրագիտության գլորոցում: Նա լինում ե լերկու տեսակ. մեկը մեծագիր գասարանական հատվող այբբեն (Քաղղուսգլխվարի հրատարակություն, զինը 15 կոպեկ), վորի հատած տառերից բառեր և ասուլիթներ են կազմում գրատախտակի վրայի պատվանդանիկի վրա և ցույց տրվում սովորողներին. իսկ մյուսը՝ փոքրագիր հատվող այբբեն՝ սովորողներին բաժանելու համար: Փոքրագիր հատվող

ալբենն առանձին հաստ թերթի վրա կա՝ ամեն մի ալբենարանում։ Այդ այբբենը յուրաքանչչուր սովորող կտրտում ե և լցնում լուցկու կամ գլանակի տուփերի մեջ և կամ գրպանիկներով շորի մեջ։

Համրիչն անհրաժեշտ ե հաշվի ուսուցման համար, իսկ որացուցը և հաշվի համար, և կարդալու ու գրելու, վորովհետեւ նրա վրա կան որերի, ամիսների անունները։

Լրագիրն սկզբում պետք ե մի հատ՝ ուսուցչի կարդալու համար՝ և նկարներ, յերբեմն ծանոթ բառեր ցուց՝ տալու համար, իսկ Յ ամսից հետո պետք ե դուրս գրել, յեթե վոչ ամեն մի սովորողի համար մի հատ, գոնե ամեն մի սեղանի համար մի որինակ «Մաճկալ», «Բանվոր» կամ «Հայաս. Աշխ» նայած դպրոցի սովորողների կազմին։

Քարտեզներից հարկավոր են՝ Հայաստանինը, Անդրկովկասինը, Խորհրդ. Միությանը, կիսագրներինը, Յեվրոպայինը։ Գյուղականագրության դպրոցներում բավական ե մոժանին յերկուուրեւ ՀՍԽՀ—ՀԾՊ

Հ ԿՊ

